

Ազատութիւնն ու կրթութիւնը անհրաժեշտ սնունդն են քաղաքակրթութեան, ո՛չ մէկ կասկած: Հայերուն կամ բախտակից տարրերուն զլացուած ազատութիւնը ինչո՞ւ ուրանալ նաեւ բուն թրքութեան համար: Եթէ չիտակ ըլլար այդ հաւաստումը, ոչ միայն թուրքերը երկիրն ու իրաւակարգը անիծելով դուրս պիտի փախչէին, այլ եւ Պալքաններէն ու Կովկասէն գաղթականական հոսանքը դէպի Անատոլու ոչ մէկ յաջողութիւն չպիտի գտնէր ցարդ:

Զմիւռնիայի «Եէնի Ասըր» թերթը Տօպրուճայի (Ռուսմանիա) թրքութեան Թուրքիա գաղթելու հաստատ ցանկութեան լուրը կը հաղորդէր այս տղերքը խմբագրուած պահուն:

Թուրքերը այնպիսի հողբանութեան մը եւ մտայնութեան մը կրողներն են ներկայիս, որ կը նախընտրեն իրենց հայրենիքը եւ հարազատ իշխանութիւնը, եթէ նոյնիսկ ասոնք չըլլան դրախտի եւ կատարելութեան տիպեր:

Նոյնը չպիտի՞ ըսէր ու ընէր սեւէ գիտակից հայ, եթէ երբեք Հայաստան մը ըլլար՝ որ մեզ գրկաբաց ընդունէր ու տեղաւորէր իր ընդարձակ հողերուն վրայ: Իտէալ կառավարութեան, Ժողովրդապետութեան ուխտեալ բարեկամներս՝ մենք Դաշնակցականներս՝ չպիտի ուղէինք Քրանսացիին ու գերմանացիին թողուլ Փարիզն ու Պեռլինը եւ երթալ խոնարհիլ Մասիսի եւ Արագածի առջեւ եւ մեր ոտուքները լուալ Արաքսի եւ Զանգուռի ջրերով, եթէ Երեւանի հայ կառավարիչները քեմալականներու չտի իտէալիստական ու ազգաչէն քաղաքականութեան հետեւէին:

Զէ՛, կարելի չէ՛ պնդել թէ Թուրքիան ազատ երկիր չէ թուրքերուն համար: Իսկ Էնկիւրիէ վարիչները բազմաթիւ անգամներով, ինչպէս երէկ, նմանապէս եւ այսօր ապացուցած են՝ որ ոչ նպատակ եւ ոչ ալ փափաք ունին, հայերուն եւ յոյներուն ազատութեան ծաղկատանը դարձնել Թուրքիան:

Դառով կրթութեան հարցին, հոս եւս խընդիրը պարզ է: Քեմալականները իրենց մէջ քանակական եւ որակական ուժ կը զգային հին կարգերը տապալելու համար: Տապալեցին, եւ իրենց հնարաւորութեան սահմանին մէջ կ'ընդ-

լայնեն իրենց դպրոցական եւ կուլտուրական ձեռնարկները: Հանրային կրթութեան հիմալուան ցած վիճակը՝ եթէ ընդամէնը 413,900 աշակերտ կայ Թուրքիոյ բոլոր դպրոցներուն մէջ (4800 նախնական վարժարաններ՝ 302,500 աշակերտով, 71 երկրորդական վարժարաններ՝ 5800 աշակերտով ու 20 բարձրագոյն վարժարաններ՝ 5609 ուսանողներով) առաջին ու վերջին պատճառը պէտք չէ համարել բարենորոգումներու անյաջողութեան: Քեմալի կառավարութեան 1926-ի վիճակագրութիւնն է ասիկա: Իսկ հետզհետէ այս մարդիկը կ'աւելցնեն կրթական պիւտճէի եւ շինարարական ձեռնարկներու համեմատութիւնն ու բաժինը, ինչպէս կը զեկուցէր վարչապետ Ըսէթ փաշա, Ազգային Ժողովի մօտակայ նիստերէն մէկուն մէջ պիւտճէի մասին ըրած յայտարարութեանց ատեն:

Նոր դպրոցներու շինութիւնը Թուրքիոյ առաջնակարգ գրադումներուն հետ պէտք է դասել: Մասնուրին հետեւողները յաճախակի տեղեկութիւններ կրնան քաղել այս ուղղութեամբ*):

Եւրոպայի զանազան համալսարաններն ու մասնագիտական վարժարանները թուրք ուսանողներու եւ աշակերտներու թիւը կարծուածէն շատ աւելի է: Անհատական եւ պետական միջոցներով, թուրքերը կ'աշխատին կրթուելու, զարգանալու եւ յատաջգիմելու համար:

*) Օրինակ մը: Պոլսոյ կուսակալ Միտհաթ պէյ ընդարձակ ծրագիրներ կը մշակէ քաղաքին մէջ դպրոցի տաղնապը փարատելու նպատակով: Այս տարի, Նահանգային Ժողովէն 500,000 սոկիի վարկ պիտի ուղչ տասը նոր շէնքեր շինելու համար քաղաքին զանազան մասերուն մէջ: Դպրոցները պիտի կառուցուին եւրոպական նախակրթարաններու ու յատակագիծներուն վրայ եւ արդիական բոլոր պայմանները պիտի լրացնեն: Կուսակալ Միտհաթ պէյ մեծ կարեւորութեամբ կը հետապնդէ դպրոցական ծրագիրը եւ յոյս ունի որ հիմն տարիէն իսպառ կը վերջանայ տաղնապը: ԳՆԳ.